ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

22 հունիսի 2023 թվականի թիվ 55-Ա

ք. Երևան

«ԱՐՓԻ ՄԵԴԻԱ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 19-րդ և 32-րդ հոդվածների դրույթներով և հիմք ընդունելով «ԱՐՓԻ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման ԵՀ N 297 լիցենզիան վերաձևակերպելու և լիցենզիայի կրկնօրինակը տրամադրելու մասին 2023 թվականի հունիսի 19-ի հայտը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշում է.***

1. Բավարարել «ԱՐՓԻ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության հայտը՝
   1) անվանման փոփոխության հիմքով վերաձևակերպել 2021 թվականի հունվարի 20-ին տրամադրված ԵՀ N 297 լիցենզիան.
   2) «ԱՐՓԻ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերությանը տրամադրել լիցենզիայի կրկնօրինակը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԱՐՓԻ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերությանը ծանուցելուց մեկ օր հետո:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2023թ. հունիսի 22
ք. Երևան